



185. ԹԱՐՄԱԿ ՓԱԲՈՒԼԸ

Ընհամ ա շի ընհամ մին շատ թամբալ մարթ, անումը Փարուց էտ Փարուց սաղ օրը տանը երինգյած էր ինհամ, բրդարձամ էր թա ուրան քեթը սըրփի: Էտ վել իւմածը մին նախշում, չահիլ կնեկ օներ, ընդրա անումըն էլ Նանախանում էր:

Տասը տարի կվել կիներ, վեր Փարուցը փըսակվալ էր, ամմա նանախանումը խոխա չէր պահիրում: Դե պիրեր հուր հետի, Փահուցին, բա ափսուզ շի, վեր Փարուցին խոխա ինի: Նանախանումը իշկի օգում էլ չէր ընդրա հետի խոխա պիրի: Տնաշենը շտեղ քյնում էր տարտակ էր կյամ, հինչ կործի քյնում էր, թարսվում էր: Նանախանումը անխիշ-պղեսկը թափում էր Փարուցին կլիխին.—Հինշի ես պետք, ա զյակուխորավ իլած, ինձ հո՞ր ես պերալ, վեր մին կընեկ էլ շիր կըրալու պահես, հոր ի՞ր փըսակվում, բա ե՞ս պետկ ա քեզ պահեմ, ոե լեշակ կապի տանը նստի, ես քյնամ ըիշշադեմ: Այման օր, Փարուցանց տոնը ըստըհենց կռեվ էր:

Մին օր Նանախանումը թորենը վառեց, մին փաղաղ խմոր օներ, հաց թխեց, թխած հացը տըղվարեց պըրծավ, մին քյնք վերցակ օներ, փոնեց մորթեց, ծըլմարավ թուռնաճաշ քըցեց: Թորենը ծասկեց, տանը կործը պըրծավ, Փարուցին յախան հըվաքեց թա.— Քյնալ պիտենք ճոլը ճախ պիրենք, վեր կարամ օշալը վառեմ:

Փարուցը կընգանան վախում էր, սուս ու փուս թյանդիրը փորավը տվավ, կընգանը ենդան ընդյավ, քյնացին դըրա քոլը:

Ծընըպին ըտրանց մին աղվես պըտահեց; Փարուլը էտ աղվեսին կը ընըցըրուց հրցըփորց ըրավ, թա էտ թօ՞րըն ա քյնում: Աղվեսն էլ թա.—Կործ օնեմ էս դոլերին, ասում են էս յաները վերցակ, հավ շատ կա, ինձ մին վերցակ ա հարկավեր, մին էլ յին հավ, տեսնամ կը կարեմ ճարեմ: Փարուլը վխժավ, ընդրան ասեց.

—Արա, էյ աղվես, քյնաս վել մեր տոն, մենք վըրցակավ թուռնամաշ ենք քըցալ, քյնաս վել թոռնան տոնս օնես օտես հա, թալընաշ վայը եկալ ա քեզ տարաւ: Մեր տոնը հեն է շինին էն զրադի տոնն ա, տոնընը կապալ ենք պըլանին տըրալ տըռնին կլիսին, հես ա ասում եմ, վեր քյնաս, իմ ծերքաս պըրծընիլ չես:

—Վաա՞յ, չէ, չէ, չէ, Ֆարուկ ախպեր, էտ հինչ ե՞ս ասում, բա իմ հի՞նչ կործըն ա, ես ծեր շինին շներան վախում եմ, հո՞ւնց կը քյնամ:

Աղվեսը հենց վեր վրցական թուռնումաշին սահը լրսեց, պըրանին նիրերը քյնաց, դալդան ընդյան թա չէ, ճնապան շոռ տըրվավ, վազ տալավ քյնաց հընգերումքը հըվաքեց, թորուն կապած քյնացին Փարուկանց տոն: Պըլանին տըռնին կլիսան եր կալան, տոնընը պացանն նի տառան տոն, թոռնան թուռնամաշը տոնս կալան, սըռդըրին, յրա տառան կերան, կճոնը լրպետեցին: Ուտիլան ետք կճոնը տարան հյաթումը տըրվարի թանձր թրեք կար, ընդրանավ լցրին, պերին տըրան թոռնումը, մին էրկու դոլա ճուր էլ ըծեցին կլիսին վեր լուրանա վել, խփին տըրան իրեսին, տոնընը կըպեցին, պըլանին տըրան նիրան տեղը, հւրանք ծըլկեցին:

Փարուլը նաև նանախանումը շելակինին հյաթումը եր տըրան, նի մտան տոն, թուռնամաշը թոռնան տոնս կալան: Փարուլը էնքան էր սուվուծացալ, վեր վենդերը թոկացալ էր, սերտն էլ քյնում էր: Փարուլը քըթիլը կոխից կճոնին մեշը, տական մին քըթիլ տաք-տաք թրեք հանեց, փլեց սըռդըրուց, տարավ պերանը: Ողկ ըրավ պըրանան եր ածեց, թա.—Ա կնե՞կ, էս տըրվարի թըրեք ա:

Նանախանումը շիրեփը կոխեց թըրեքը խառնեց, տական մին շիրեփ տուս կալավ, եշեց տեսավ դորթ վեր թրեք ա, շիրեփը Փարուլին կլիսավը շալ տվավ:—Էս լոխ քու դամլա խելքիտ պանն ա, աղվեսը մեր տան տեղը հի՞նչ էր զյուղինմ, տանը տեղն էլ ըսեցիր, պըլանուն տեղն էլ, թուռնումաշին տեղն էլ, դե մհեկ քյնա թրեք կեր, էտ քեզ թիշ ա:

Ասեց, դըգլանակը երկալավ, երթըկիլավ մարթին տանան տոնս ըրավ: Տասնըհենդ լավաշ հաց մին յալլուխում կապեց, մղական

լրակ, թա.—Էտ էլ քու փայտ, կեր զըխտըկվի թորն օղում ես
քլնա, վեր էլ քու իրեսը տեսնամ վեց, վեր մին էլ եկալ ես, վեն-
դըտ կըկոտրեմ: Ասեց, տհնումը մարթին քըմական կապեց:

Փարուլը մընաց քյալչումը սըրթսըրթալիս: Հացը յալլուխավը
եր կալավ քլնաց նի մտավ հըրըգանին կյանմը, մին տաք քյան-
շում խոտին յրան նստեց, յալլուխը պաց ըրավ, էրկու լավաշ դիմ-
շակ ըրավ կերավ, քըշտացավ, խոտին յրան կոխկին ընդյավ, քոն
իլավ:

Մերը-ծերին Փարուլը կյանման տուս հկը, կյլնիս եր կալավ
քլնաց: Մըտկումը տըրավ, թա. «Քյնալ պիտեմ աստըծու կոխկը
կյանջյառ անեմ, տեսնում ես իս ստըհնեց քյանբախտ եմ, հինչ
անեմ, վեր կարամ ապրեմ, նաննխանումին էլ լավ պահեմ: Կողին
նանախանումը ինձ թակալ ա, տանան տուս ըրալ, մին ա, ես
ընդրան շատ եմ սնկում, շատ լավըն ա, հենց ա բաղում պաց-
ված վարթ ինի, Հով ինի», վեր ընդըհնեց գյողալ, նախշում կըն-
դանը սիրի վելու:

Մտըհենց մըտըծիլավ, ինքը հնդան նհնատ խուսալավ, Փարուլը
մին քանի օր ճնապա քյնաց: Իրեքհինջի օրը Փարուլը հսավ մին
մեծ կյետի, տըրխընին հոնեց, վենդերը եր քաշեց, կյետավը անց
կըցավ էն զոլը, մին կունի յոխուշ կար ըռաշին ըսկըսեց պըցրան-
նալ, յոխուշին կեսումը տեսավ պատին տակին հենա մին կյանկ
պըցրանած, օղում էր երկինա, կարում շեր: Փարուլին վեր տեսավ,
հըցըրուց, թա.—Մարթ ախապեր շտե՞ղ ըս քյնում:

—Քյնում եմ աստըծու: կոխկը կյանջյառ անեմ, տեսնամ խե-
ըստըհենց անբախտ եմ, խե քյասիր եմ ապրում:

—Դե վեր աստըծուն տեսնաս, մետըրտ ինի, ինձ հետի էլ հըր-
ցըրու, ասի մին կօնէ հին ա ճննդպին զըրադին եր ընդյած, սո-
ված սատկում ա, հինչ անի, վեր կարա ապրի, սատկի վել:

—Աշկիս յըրան, կասեմ, բա իս շեմ ասիլ, պըցրանաս հու-
բրեհ շեն օդիլ, կասեմ: Քյնաց-քյնաց մին լզար, քհսան ընդյած
ծիր զըհեց, մին քըրքարուտ զալի մել կաղնած: Էտ ծին էլ Փա-
րուլան հըցըրուց, թա.—Ա պարի մարթ, էտ թորն ես քյնում:

—Աստըծու կոխկըն եմ քյնում, կյանջյառ օնեմ:

—Ճնապատ պարի ինի, պարով աստըծուն տեսնաս, կործըտ
էլ հաջողի: Ամմա խնթրում եմ մին էրկու խոսկ էլ ինձ հետի ասես:
Ասի մին ծի կա, քոսան ընդյած, լզար, սոված հենա մին քըրքա-
րուտ զըլում կաղնած, տերը տուս ա ըրալ, հենա սատկում ա,
հինչ անի, վեր շանը սըղանա, տերն էլ կյա տանի պահի:

—Կասեմ, ծի ախաղեր, էտ հինչ տըժար պան ա, վեր ասեմ
վել, լափ քյեփըտ քյնք պահի, համ կասեմ, համ էլ խաբարը կը
պիրեմ:

Փարուզը նորան ճնապան եր կալավ էլլու քյնաց, դըրըրուզյու-
նին շատ էր բըզարան, համ էլ սոված էր, մին խնձըրի ծառի տակի
նստեց վեր դինջանա, համ էլ մին թիբա հաց օտիի, Փարուզը հացը
օտում էր, համ էլ ինքը-ինքը պացրու-պանցրու խոսում: Խնձըրի
ծառը ընդրան հրցըրուց.—Փարուզ դայի էտ հինչ ես խոսում, ըս-
տըզերավ թո՞րըն ես քյնհնմ: Փարուզը խնձըրի ծառին էլ ասեց
հորան դարգերը: Սառն էլ թա.—Փարուզ ախաղեր, դե վեր աստըծուն
ջընես, իմ դարդըն էլ պատմի, ասի մին լավ խնձըրի ծառ տեսա,
ճըզներին կեսը շուրացած, մընացածըն էլ շուրունալի յրա յա, հինչ
անի, վեր էլլու տըլարի բար տա: Իմ խնձըրնին ըշխարքիս ամե-
նալավն ա:

—Աշկիս յրան, կասեմ, հըրցըփորց կանեմ, հինչ վեր ասեց
խամբարը կը պիրեմ: Թա ափսուզ լի՞ թհենց խնձըրի ծառը, վեր
շուրանում ա, վեր իներ, մին էրկումը կոտիի: Արխային կաց, հրցը-
նիլու վեմ:

Վենդերը քաշ տալավ Փարուզը էրկու օր էլ ճնապա քյնաց հը-
սավ մին ճուկստակ ճնըպի, կաղնեց վարավուրդ ըրավ, թա դըրան
վեր դուլը քյնաց, տեսավ մին հիլիվեր, սիստակ մըրոքավ մարթ,
հենա ճնըպին դրաղին մին քարի յրա նստած, մին էրգյան կրվա-
գան ծերթին: Էտ հիլիվերը Փարուզին հրցըրուց.

—Ա քյանիր քյանըրախտ Փարուզ, էտ շտեղ ես քյնհնմ:

Փարուզը զըրմացավ, վեր էտ անծանօթ հիլիվերն էլ ա գյու-
ղում ուրան քյանըրախտ, քյանիր ինիլը:

—Քյնում եմ աստըծու կոխակը կյանդյատի, տեսնամ պատ-
ճառը հինչ ա, վեր ես էսքան քյանըրախտ եմ:

—Աստումը ես եմ, հինչ կյանդյատ օնես, լոխ ասի: Փարուզը
հըրան դարգերը թամունզ պատմեց: Ծնդան էլ կյանդյին դարդը պատ-
մեց, ընդեղանը, ծիին ցավը պատմեց, ընդրանա ետը խնձըրի
ծառին կյանդյատը ըրավ:

Աստում լսեց Փարուզին, կլխավը կընդավ-կընդավ ըրավ,
թա,—Լավ, գե լսի հինչ վեր ասեմ, կը քյնաս ընդըհենց էլ կանես,
բախտըտ կը պացըլի: Կը քյնաս էն խնձըրի ծառին կասես, տակ-
ունը մըտ վեսկի կա թաղած, մին քյանիր մարթի ասի թող քանդի
տինա օնի հըրուստանա, լորս դուլըտ էլ փիլ-փիլ անի, միրի, կը
տըլարես, լավ բար կը տաս: Միին էլ կասես, մին քյանիր մարթի

խնթըրի, ուրան տանի, ու նոթը սապեսի նշետ խառնի քուսուտ տեղերը բցի, լավ էլ ուսուցնի, յարերը կը սղանա, կը քյուրլանա, ուրան հետի լավ կործ կանի, Կյուլին ասի, վեր աստուած ասեց թող Ընդպավը քյնացող մին դամլա, ախմախ մարթ փռնի ցրեվ տա օտի, եր կենա քյնա հնրան կործին, էտ լոխ, հինչ վեր ըսեցի, ընիւնան ետք, բու բախտը էլ հենա ինքը հնրան վենդավը կյալն վարու առաջտ:

Փարուլը ուրիսացավ, շնորակալ տարանվ, ետ տառավ դըրան տոն, մըտըծիլավ.—Դե մհեկ թող նանախանումը ինձ թակի տանան տուս անի, բախտըս պացվենմ ա, ես հնրան թակիլ շեմ, ընդրան ես շատ հմ սննդրում:

Ինքը հնրան նհետ խոսալավ եկավ հսավ խնձերի ծառին: Հինչ վեր աստուծ ասալ էր ընդրան ասեց Սառը Փարուլին խնթըրեց, վեր ինքը քանդի, վեսկին տուս տա հրոսատանա, նուրն էլ կապի հնրան ճիրի, ամեռնըն էլ խնձերը քաղի տանի օտի: Փարուլը թա.—էտ մինը իմ կործը շի, աստուծ իմ բախտը պացալ ա, իմ հինչին ա հարկավեր բու տակուտա վեսկիրը, հալա հու վա գյուղում քանի օր պետկա լըրշարվեմ քանդեմ, չե, հարկավեր շի: Թյնաց հսավ քուսուտ ծիին, ընդրան էլ պատմեց աստըծու ասսածը: Սին Փարուլին շատ խնթըրեց, յալվարմիշ իլավ, վեր հնրան տանի աստըծու ասածնին կըդարի, ինքըն էլ ընդրա հետի քյշեր ցիրեկ կործ անի: Փարուլը ծիին խոսկըն էլ կոտրեց, թա.—Աստուծ իմ բախտը պացալ ա, ինձ վել մին ծի հարկավեր շի:

Դամլա Փարուլը թողեց ծիին հնրան հնդան յիշիլիս, ինքը քյնաց կյուլին կոխկը: Կյուլին պատմեց աստըծու խորուրթը, թա, հինչ պետկա անի: Կյուլը, թա.—Փարուլ ախպեր, քըզանա շատ շնորակալ եմ, վեր խոսկըս կոտրալ շես, ամմա էնքան սովուծ կըցալ ըմ, վեր քըզացալ եմ, ընջուկնիս լավ շեն լսում, մին խրեկ մուսացի ընջուկին ասի, վեր լսեմ: Փարուլը մուսացավ, վեր կյուլին ընջուկին ասի:

Ա բաշումվա դմնում կյուլ, Փարուլին բուզազան փանեց տրանվ տակին, թա.—Թըզանա դամլա, քըզանա թամրալ մարթ շտեղան ճարեմ, աստուծ լհա քեզ դարկալա, վեր ես օտեմ: Խեղճ Փարուլին էտ կյուլը ցրեվ տվավ, ծեվ-ծեվ ըրավ, կոշտ լափից, քյեփից քյուրուցուց տրնըրկի տալավ փախավ սարը:

Էքսի օրը Փարուլանց շինացի մին մարթ էտ ճընդպավը անց

կընալիս տեսավ շանավարի ցրեվ տված մարթի վըսկըռնի: Ներկունին հըվաքեց, թուփ ըրավ մին դալդա տեղ կյանտեց, չորս դոլին եշեց, մին փափաղ քըթավ: Էտ փափաղը եր կալավ, տնդըղեց տեսավ հենց ա ծանոթի փափաղ ինի: Մըտածեց, մըտածեց բնկրգան մետքն ընդյավ, ինքը ուրան ասեց.—Արա՞», էս մեր հընվան Փարուղին փափաղն ա: Էտ թամրալ տընաշենց խե՞ ա եկալ շանավարի փայ տառալ: Փափաղը պերավ տվավ նանախանումին, տեսածը պատմեց:

Եինացիք հըվըքվեցին, քյնացին Փարուղին վեսկեռնին հըվքքեցին պերին. նանախանումը ընդրա յրան մին սոտ լաց ըլավ, ենդան տարան շինին հանգիստարանումը թըղեցին:

Փարուղին թըղիլան շորս ամիս էր անց կըցալ, վեր նանախանումը թաղաղան մարթի քյնաց:

Մին տարի հալա կար վեշ, վեր նանախանումը մին կըոզնոտ մըղերավ նախշուն տղա պերավ, նոր կըլիսի ընդյավ, վեր կը կարար խոխա պիրեր, բախտավեր ապրեր: Նանախանումը հըսավ ուրան նպըտակին, ամմա ափսուզ, վեր Փարուղը կարեց վեշ խելքի կյա:

